




2 Զբոսաշրջիկներով օդապարիկ է պայթել



4 Մարտի 1. Զաղպաշտպանության համաշխարհային օրը



5 Անվտանգության դարոց



7 Դեպի Երկրի կենտրոն ճամփորդության նոր միջոց



ISSN 1829-149X 13006  
9 771829 149003

# արտակարգ թերթ

N 6 (470) 1.3.2013 - 7.3.2013 www.emergency.am

## ԱԻ նախարարությունն ավելի հզոր ու ազդեցիկ կառույց է դառնալու

Փետրվարի 27-ին ՀՀ ԱԻ նախարարություն էր այցելել ՆԱՏՕ-ի քաղաքացիական արտակարգ իրավիճակների պլանավորման համագործակցության ծրագրերի նախագծի ղեկավար Էվերտ Սոմերը: Այցի հիմնական նպատակն էր քննարկել ՀՀ ԱԻ նախարարի՝ 2012 թ. դեկտեմբերին Բրյուսելում գտնվող ՆԱՏՕ-ի կենտրոնական այցելության արդյունքները, նախարարության անցյալ տարվա ձեռքբերումները, զարգացման ծրագրերն ու նախանշել համագործակցության հետագա ուղիները:



Մինչ նախարար Ա. Երիցյանի հետ հանդիպումը, Է. Սոմերը եղավ Ճգնաժամային կառավարման կենտրոնում՝ ծանոթանալու նորամուծություններին և ձեռքբերումներին: Կենտրոնի պետ, գնդապետ Յ. Խանգելյանը ներկայացրեց վերջին տարիներին իրականացված հսկայածավալ աշխատանքը, մասնավորապես՝

- նախարարությունը պարտավորություն է ստանձնել աշխատանքի տեղավորել 30 հազմանդամի, որոնցից 10-ն արդեն վերապատրաստվել են ու շուտով կանցնեն աշխատանքի:
- ներդրվել են ՓԾ տրանսպորտային միջոցների տեղաշարժը վերահսկող (GPS), ինչպես

նաև հանրապետության բոլոր հրշեջ-փրկարարական ջոկատների և մարդկանց զանգվածային կուտակման վայրերի տեսավերահսկման համակարգերը.

- կենտրոնին է միացվել մետրոյի կայարաններում և մայրաքաղաքի փողոցներում տեղադրված 164 տեսախցիկ, ինչպես նաև՝ էլցանցերը սպասարկող ավտոմեքենաների տեղաշարժը վերահսկող համակարգը (GPS).
- սերտացել է համագործակցությունը ոստիկանության և շտապօգնության ծառայության հետ.
- տարբեր նշանակության օբյեկտներում տեղադրվել են հակահրդեհային վերահսկողության ավտոմատ համակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր է հրդեհի դեպքում մոտ 3 վայրկյա-

նի ընթացքում ահազանգել 644:

ՀՀ ԱԻ նախարարի հետ հանդիպման Էվերտ Սոմերը նշեց, որ ծանոթ լինելով Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության պատմությանն ու պարբերաբար մեր երկիր այցելելու շնորհիվ իր համար առավել նկատելի է ԱԻ համակարգի զարգացումը: Նախարար Ա. Երիցյանը, ողջունելով Է. Սոմերին, ասաց.

– Մենք այսօր բոլոր ուղղություններով ցածրվում ենք առաջ և կառուցում հզոր նախարարություն, որը միշտ դասրաս է օգնության ձեռք մեկնել մարդկանց: Արագ արձագանքման «911» ծառայությունը կարճ ժամանակում նվաճել է մեր համախառն ազդեցիկ վստահությունը: Համեմատության համար նշենք, որ մենք ավելի ցածր զանգեք ենք ստանում, քան հանրապետության մյուս, ավելի վաղ ստեղծված արձագանքման ծառայությունները միասին վերցրած: Միայն անցյալ տարվա ընթացքում «911» ծառայությունում ստացվել է 1.3 միլիոն զանգ, որոնցից ոչ մեկն անարձագանք չի մնացել: Այս ամենին մենք միայնակ չենք հասել, մեր կողմին են եղել հավասարի գործընկերներ: Սակայն, չնայած մեր ձեռքբերումներին, կարծում ենք, դեռ անելիքներ ևս կան: Այս տարվա մեր առաջնահերթություններից մեկը Քառնու դիսարանի վերագործարկումն է ու ձեռավորումը հեռագրությունների տարածաշրջանային կենտրոնի:

Է. Սոմերն ընդգծեց, որ Հայաստանը ՆԱՏՕ-ի գործընկեր երկրներից ամենաակտիվն է, որը մասնակցում է ՆԱՏՕ-ի բոլոր միջոցառումներին ու նախաձեռնություններին.

– Այս համակարգում զարգացումը ցածր արագ է ընթանում: Անցած 15 տարիների համեմատ՝ առաջընթացը ցածր մեծ է: Այստեղ մեծ աշխատանք է տարվում արտակարգ իրավիճակների կառավարման կարելու ուղղություններից մեկի՝ հանրային իրազեկման ոլորտում՝ «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի և նախարարության կայքի միջոցով: ՆԱՏՕ-ի Հայաստանում անցկացված «Արմենիա 2010» խոշոր միջազգային ուսումնական ծրագրերը ևս առաջընթաց, որ ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը զգնվում է բարձր մակարդակի վրա: Վստահ ենք, որ ԱԻ նախարարությունը գնալով ավելի հզոր ու ազդեցիկ կառույց է դառնալու:

### Մարդասիրական օգնության կենտրոն՝ Հայաստանում

Անցյալ տարի ՀԱՊԿ շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանում հիմնել հայ-ռուսական համատեղ տարածաշրջանային մարդասիրական օգնության կենտրոն:

Ներկայումս ՀՀ և ՌԴ արտակարգ իրավիճակների նախարարությունների միջև քննարկումներ են ընթանում կենտրոնի ձևաչափի, տեղակայման վայրի, կառուցվածքի և այլ հարցերի վերաբերյալ:

Այս օրերին Երևանում էին գտնվում հայ-ռուսական մարդասիրական օգնության կենտրոնի ստեղծման աշխատանքային խմբի անդամներ՝ ՌԴ ԱԻ-ի միջազգային գործունեության



ղեկարավարների տնօրենի տեղակալ Վիկտոր Գոլիցինը, խորհրդակցական Վլադիմիր Կուրյակովը, գլխավոր մասնագետ Վլադիմիր Վատուտինը, ներդրումների և կապիտալ շինարարության ղեկարավարների ներկայացուցիչ Բորիս Երմուլանը և «Էմերկոմի» տնօրենի տեղակալ Իգոր Շչերբակովը:

ՓԾ տնօրեն, գեներալ-մայոր Ս. Ազարյանի հետ կայացած հանդիպման արդյունքում որոշվեց նախ շրջել կենտրոնի տեղակայման համար առաջարկված տարածքներում և դրանց հնարավորություններին տեղում ծանոթանալուց հետո անցնել փաստաթղթային ձևակերպումներին:

### Դարից երկար ձգված 10 օր Փրկարարները գտել են գեղն ընկած երեխայի դին

Փետրվարի 18-ին, ժամը 15.30-ին ՀՀ ԱԻ ճգնաժամային կառավարման կենտրոնում ահազանգ էր ստացվել, որ Արարատի մարզի Խաչվառ գյուղի մոտ Հրազդան գետն էր ընկել 2000 թ. ծնված Արսեն Բալայանը: 10 օր տեսած որոնողական աշխատանքներից հետո՝ փետրվարի 27-ին, ժամը 10.07-ին հայտնաբերվել էր երեխայի դին՝ ընկնելու վայրից 700 մ հեռավորության վրա:

Փրկարարները ջանք չէին խնայում գետն ընկած երեխային գտնելու համար: Որոնողական աշխատանքները դադարեցվում էին միայն ուշ գիշերին ու լույսը բացվելուն պես վերսկսվում: Երեկոյան ժամերին օգտագործվում էր հատուկ տեխնիկա՝ տեղանքում լուսավորություն ապահովելու և աշխատանքները շարունակելու համար:

Որոնողական գործողություններին մասնակցել են ՀՀ ԱԻ-ի Արարատի մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը (11 փրկարար), Հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի հերթապահ խմբերը՝ (7 փրկարար) և Սեւանի հատուկ ջրափրկարարական ջոկատի հերթապահ խմբերը (10 ջրափրկարար):



**ԱԻՆ**  
միացյալ հեռախոսահամարն է  
**911**

### Ավտոմեքենան բախվել է ծառին

Փետրվարի 21-ին, ժամը 21.01-ին ահագանգ է ստացվել, որ Երեւանի թեւոսյան փողոցի սկզբնամասում տեղի է ունեցել ճՏՊ. կան տուժածներ, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Դեռեւս չբացահայտված հանգա-



մանքներում «Օպել» մակնիշի 31 SS 733 պ/հ ավտոմեքենան (վարորդ՝ 1991 թ. ծնված Գ. Եղիազարյան) դուրս է եկել ճանապարհի երթևեկելի հատվածից, հարվածել ծառին և կողաշրջվել, իսկ ծառը ընկել է ճանապարհի երթևեկելի հատված: Մինչ հրշեջ-փրկարարների կանչի վայր հասնելը վարորդը եւ ուղեւորներ՝ 1992 թ. ծնված Ա. Սկրտչյանը, 1991 թ. ծնված Վ. Բաղայանը եւ 1990 թ. ծնված Ա. Ազարյանը տեղի ուժերով դուրս են բերվել ավտոմեքենայից եւ տարբեր աստիճանի մարմնական վնաս-

վածքներով տեղափոխվել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը բավարար է:

Հրշեջ-փրկարարներն իրականացրել են ավտոմեքենայի հոսանքազրկման, ծառի մասնակի մասնատման եւ ճանապարհահատվածի լվացման աշխատանքներ:

### Փլուզվել է անասնագոմը

Փետրվարի 23-ին, ժամը 10.18-ին ահագանգ է ստացվել, որ Կոտայքի մարզի Բջնի գյուղի 2-րդ փողոցի թիվ 47 տան բակում



փլուզվել է անասնագոմ:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ ծյան ծանրությունից մասամբ փլուզվել է Ն.Պողոսյանին պատկանող անասնագոմի տանիքը (35 քմ), ներսում եղած կենդանիները չեն վնասվել: Հրշեջ-փրկարարները կենդանիներին դուրս են բերել անասնագոմից:

### Այրվել է անասնագոմի փանիքը

Փետրվարի 22-ին, ժամը 19.17-ին ահագանգ է ստացվել, որ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղում այրվում է անասնագոմի տանիք: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 20.50-ին, մարվել՝ 23.05-ին: Այրվել է Ժ. Կիրակոսյանին պատկանող անասնագոմի տանիքը՝ մոտ 300 քմ մակերեսով եւ պահեստավորված 500 հակ անասնակեր:

### Փրկարարներն ավտոմեքենաները դուրս են բերել երթևեկելի մաս

Փետրվարի 22-ին, ժամը 23.06-ին ահագանգ է ստացվել, որ Գեղարքունիքի մարզի Սոթք-Վարդենիս ավտոճանապարհին ավտոմեքենաներն արգելափակվել են ծյան մեջ եւ չեն կարողանում շարունակել ընթացքը. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրշեջ-փրկարարները ճանապարհի երթևեկելի հատված են դուրս բերել «ՊԱԶ» մակնիշի (3 ուղեւոր) 25 SU 328 պ/հ ավտոբուսը եւ «ՎԱԶ-2106» մակնիշի 34 SU 761 պ/հ ավտոմեքենան:

### Բախվել են ավտոմեքենաները

Փետրվարի 22-ին, ժամը 23.17-ին ահագանգ է ստացվել, որ Երեւանի Աճառյան-Բաբաջանյան փողոցում՝ «Փլեյ-Սիթի» ՍՊԸ-ին հարակից, տեղի է ունեցել ճՏՊ, կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ, ճԿԿ ԱԻ արձագանքման եւ հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի հերթապահ խմբերը:

Զբացահայտված հանգամանքներում բախվել են «ԲՄՎ» մակնիշի 34 SU 967 պ/հ եւ «Նիսսան» մակնիշի ավտոմեքենաները:

Հրշեջ-փրկարարները «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայից դուրս են բերել ուղեւորներ Սյուզի Վարդանյանի ու Սիլվա (ազգանունը չի պարզվել) դիերը, իսկ վարորդ՝ Գ. Վարդանյանին տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են բավարար:

### Երթուղային տաքսին ընկել է դիտահորը

Փետրվարի 27-ին, ժամը 19.40-ի սահմաններում Երեւանի Աբովյան 34 շենքի

Որոնողափրկարարական աշխատանքները շարունակվում են:

### ԱՄՆ-ում ձյան առաջ փեղումներ են

ԱՄՆ-ում 100 տարվա կտրվածքով ռեկորդային քանակությամբ տեղումներ են: Կանգաս եւ Միսսուրի նահանգներում արտակարգ դրություն է հայտարարված: Իշխանությունները քաղաքացիներին հորդորում են առանց անհրաժեշտության փողոց դուրս չգալ:



Առատ ձյան տեղումները 4 մարդու մահվան պատճառ են դարձել: Նրանք զոհվել են Այովա, Կանգաս, Նեբրասկա, Օկլահոմա նահանգներում ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով:

մոտ «ԳԱԶել» մակնիշի թիվ 41 երթուղային տաքսին ընկել է դիտահորը:

Պատահարի հետեւանքով ուղեւոր, 1967 թ. ծնված ժաննա Հարությունյանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Մ. Հերացու անվան թիվ 1 կլինիկական հիվանդանոց, որտեղ ստանալով առաջին բուժօգնություն՝ դուրս է գրվել:

### Մեկ ահագանգ, երկու արձագանք

Փետրվարի 26-ին, ժամը 22.21-ին ահագանգ է ստացվել, որ Երեւանի Ա. Խաչատրյան 24 շենքի 9-րդ բնակարան հավանական է գող է մտել, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի հերթապահ խումբը:

Ժամը 22.40-ին փրկարարներն ընթացքի ժամանակ՝ Կիւսյան կամրջի վրա, նկատել են մոտ 35 տարեկան կնոջ, որը փորձել է ինքնասպանություն գործել՝ նետվելով դեպի ընթացող ավտոմեքենաները, սակայն անհաջող փորձից հետո վազել է դեպի կամրջի եզրը՝ որպեսզի ցած նետվի:

Փրկարարները կանխել են հոգեկան անհավասարակշիռ վիճակում գտնվող կնոջ ինքնասպանության փորձը, եւ նրան հանձնել տարածքում հերթապահություն իրականացնող ոստիկանության աշխատակիցներին:

Այնուհետեւ հերթապահ խումբը շարունակել է ընթացքը դեպի Ա. Խաչատրյան փողոց:

Փրկարարները բացել են Հակոբջանյանին պատկանող բնակարանի դուռը:

Ոստիկանության աշխատակիցները պարզել են, որ նույն օրը ժամը 17.00-21.30-ն ընկած ժամանակահատվածում, տեխնիկական միջոցների գործադրմամբ մուտքի դուռը բացելու միջոցով, թշակառու Նորիկ Կաբախյանին պատկանող բնակարանից գողացել են տարբեր տեսակի ոսկյա զարդեր՝ պատճառելով 10.000.000 դրամի նյութական վնաս:

## միջազգային լուրեր

### Հնդկաստանում ողջակիզվել է 13 մարդ

Հնդկաստանի Կալկուտա քաղաքի առեւտրի կենտրոնի բարձրահարկ շենքում հրդեհ է բռնկվել, որի հետեւանքով ողջակիզվել է առնվազն 13 մարդ, եւս 6-ը վիրավորվել են եւ տեղափոխվել են հիվանդանոց: Մոտ 30-ից 40 մարդ չեն կարողացել լքել այրվող շենքը. նրանց ճակատագրի մասին դեռ ոչինչ հայտնի չէ:

Նախնական տվյալներով՝ հրդեհի պատճառը եղել է կարճ միացումը:

### Չինաստանի քիմիական գործարանում պայթյուն է փռվել ունեցել

Չինաստանի Գույյան քաղաքի քիմիական գործարանում պայթյուն է տեղի ունեցել, որի հետեւանքով տուժել է առնվազն 5 մարդ:

Իշխանություններն անվտանգության նկատառումներով գործարանի 1.5 կմ շառավղով տարածքից տարհանել են մոտ 20 հազար մարդ:

Գործարանը զբաղվում էր միջատների



վերացնելու համար նախատեսված քիմիական նյութերի արտադրությամբ:

### Ավտոբուսը ձորն է ընկել

Պակիստանի հյուսիս-արեւմուտքում ավտոբուսը ձորն է ընկել: Նեղ լեռնային ճանապարհի վրա ավտոբուսը շրջադարձի ժամանակ ձորն է ընկել, որի հետեւանքով զոհվել է 17 մարդ, այդ թվում՝ 9 կին եւ 5 երեխա: 11 մարդ համարվում է անհետ կորած: Նախնական տվյալներով՝ վարորդը ճանապարհի ողորկ հատվածում գերազանցել է արագությունը եւ մեքենան ձորն է գլորվել:





# արագ արձագանքման ծառայություններ

## Գառնու դիտակայանն ուշադրության կենտրոնում

Փետրվարի 26-ին ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» (ՍՊԾ) գործակալությունում տեղի ունեցավ ՍՊԾ գիտատեխնիկական խորհրդի նիստ: Նիստը վարում էր ՍՊԾ գործակալության պետ Յ. Պետրոսյանը, մասնակցում էին ՍՊԾ գործակալության, «ՍՊԱրմ» ՊՈԱԿ-ի և «ԵրԿԱԳՀԻ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ:

Օրակարգում ընդգրկված էին Գառնու դիտարանի վերագործարկման և հիդրոերկրաբանական կայանի ստեղծման խնդիրները: Մասնավորապես, քննարկվեցին 6 նոր սեյսմոգրաֆ սարքերի և 3 սեյսմիկ դիտակայանների տեղադրման, ինչպես նաև, Գառնու դիտարանի ղեկավարման փոփոխության կամ փոխարինման հարցերը:

Յ. Պետրոսյանը նշեց, որ ղեկավարման վերականգնելու և բնականաբար համար կապ է հաստատվել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Երկրի ֆիզիկայի ինստիտուտի հետ, որտեղից հայտնել են, որ պատրաստ են օգնել և աջակցել այդ հարցում: Նիստի ավարտին որոշում կայացվեց



մեկ շաբաթ անց այցելել Գառնու դիտակայան՝ ավելի մոտիկից ծանոթանալու վերագործարկման հետ կապված խնդիրներին և, ելնելով այցելության արդյունքից, ավելի մանրամասն տեղեկատվությամբ գրություն ուղարկել Ռուսաստանի ԳԱ Երկրի ֆիզիկայի ինստիտուտ:

## Դարից երկար ձգված 10 օր Փրկարարները գտել են գեղն ընկած երեխայի դին

«**1**» Դժբախտ պատահարի նույն օրը դեպքի վայր էր ժամանել նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա. Երիցյանը: ԱՐ նախարարը դեպքի վայրում էր գտնվում նաև հաջորդ օրերին՝ որոնողական աշխատանքներին հետևելու և երեխայի վերաբերյալ ստացված տեղեկություններին տեղում ծանոթանալու համար: Որոնողական աշխատանքները տեղում ղեկավարում էր ՓԾ տնօրենի տեղակալ, գեներալ-մայոր Ա. Պետրոսյանը:

Պատմելով որոնողական աշխատանքների մասին՝ Արարատի ՄՓԿ պետ, փոխգնդապետ Վ. Հովսեփյանն ասաց, որ աշխատանքների ամբողջ ընթացքում իրենց շատ են օգնել, հատկապես, մահացած երեխայի հայրն ու մորեղբայրը, ովքեր փրկարարների հետ հավասար մասնակցում էին որոնողական աշխատանքներին:

- Շատ են աջակցել նաև երեխայի մյուս հարազատներն ու գյուղի բնակիչները: Արսենին գտնելու համար մենք համագործակցել ենք Խաչիառի գյուղապետարանի, ոստիկանության, ԱԾ-ի, «Հիդրոնետրոն» ՍՊԸ-ի, ինչպես նաև, ռուս սահմանապահների հետ, քանի որ որոնողական աշխատանքներն իրականացվում էին գետի ողջ երկայնքով՝ հայ-թուրքական սահմանին մոտ,- նշեց Վ. Հովսեփյանը:

Որոնողական աշխատանքներին խոչընդոտող միակ հանգամանքն ու երեխայի դին միայն օրեր անց գտնելու պատճառը Հրազդան գետը լցվող կեղտաջրերն էին, որոնց պատճառով ջրի տակ տեսանելիությունը չափազանց ցածր էր: Սակայն ջրափրկարարները, նույնիսկ այդ պայմաններում,



ջրասուզման աշխատանքներ էին իրականացնում բոլոր հավանական վայրերում:

- Արսենն ընտանիքում երկրորդ երեխան էր: Նրա դին հանելուց հետո հայրը շատ ծանր վիճակում էր գտնվում, սակայն նա և, առհասարակ, Արսենի բոլոր հարազատներն իրենց երախտիքի խոսքերը հայտնեցին որոնողական աշխատանքներին մասնակցած բոլոր փրկարարներին, քանի որ բավարարված էին մեր կատարած աշխատանքից, ավելացրեց փոխգնդապետ Վ. Հովսեփյանը:

**ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն իր խորին ցավակցությունն է հայտնում զոհված երեխայի հարազատներին:**

## ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում գործող նորաբաց մշակույթի տունը հայտարարում է ընդունելություն հետեյալ խմբակներում

- Ժողովրդական պարեր (հայկական և այլ ազգերի)
- Ժամանակակից պարեր
- Լատինամերիկյան պարեր
- Բրեյք-դանս
- Իփ-հոփ
- Վոկալ
- Ղաջնամուր
- Նկարչություն և բափք (նկարչություն գործվածքի վրա)
- ղեկորատիվ կիրառական արվեստ
- ապակու և կերամիկայի նախշանկար
- օտար լեզուներ (խոսակցական անգլերեն և ռուսերեն):

Վեց տարեկանից բարձր երեխաները բոլոր անհրաժեշտ պայմանները կունենան իրենց արդյունավետ ժամանցը մշակույթի կենտրոնում անցկացնելու համար:

Մշակույթի տան բոլոր սաների համար ուսումնառության առաջին ամիսն անվճար կլինի, իսկ ՀՀ ԱՐ նախարարության աշխատակիցների երեխաների համար կգործեն զեղչեր:

Ցանկացողները, մինչև **ս/թ ապրիլի 1-ը**, կարող են դիմել հետեյալ հասցեով՝ **ք. Երեւան, Գլինկայի 13** (Վ. Տերյանի անվան թիվ 60 դպրոցի հարեւանությամբ):

Մանրամասների համար զանգահարել՝ **57-33-22** (երկուշաբթի-ուրբաթ, ժամը՝ **11.00-17.00**):

## սեյսմիկ պաշտպանություն

Ա.թ. փետրվարի 21-ից մինչև 27-ը ՍՊԾ-ի դիտակայանները Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ և ավելի ուժգնությամբ երկրաշարժ չի գրանցել:

**Տարածաշրջանում.** 3 բալ և ավելի ուժգնությամբ գրանցվել է 26 երկրաշարժ: Դրանցից 5-ը՝ (3 բալ ուժգնությամբ) Թուրքիայի Վանի, և 9-ը՝ (3-ից մինչև 4 բալ ուժգնությամբ) Իրանի Ահաբի երկրաշարժերի հետցնցումներն են:

Փետրվարի 21-ին 3-4 բալ ուժգնությամբ 2 սեյսմիկ իրադարձություն է տեղի ունեցել՝ Թուրքիայի Կարս քաղաքից 35 կմ հյուսիս և Իրանի Մակու քաղաքից 48 կմ հարավ: Փետրվարի 23-ին Թուրքիայի Սարիլամիշ քաղաքից 28 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Էլիկեմետրոնով երկրաշարժի ուժգնությունն էր 4 բալ:

Փետրվարի 24-ին 3 բալանոց 2 թույլ ցնցում է գրանցվել Վրաստան-Հայաստան սահմանային գոտում՝ Դմանիսի քաղաքից 15 կմ հարավ-արևմուտք, և Իրանում՝ Խոյ քաղաքից 41 կմ հյուսիս-արևմուտք: Նույն օրը Իրանի

Մակու քաղաքից 42 կմ հարավ-արևմուտք տեղի է ունեցել երկրաշարժ, որի ուժգնությունն էլիկեմետրոնային գոտում կազմել է 4-5 բալ: Երկրաշարժին ժամեր անց նույն էլիկեմետրոնային գոտում հետևել է 3 բալ ուժգնությամբ 2 ստորգետնյա ցնցում: Փետրվարի 25-ին 4 բալ ուժգնությամբ սեյսմիկ իրադարձության էլիկեմետրոնը գտնվում է Իրանի Խոյ քաղաքից 30 կմ արեւելք, որին հաջորդել է նա 2 երկրաշարժ՝ 3 բալ ուժգնությամբ: Փետրվարի 27-ին Արրեջանի տարածքում տեղի է ունեցել 4 բալ ուժգնությամբ սեյսմիկ իրադարձություն, որի էլիկեմետրոնը գտնվում է Գյանջա քաղաքից 30 կմ արեւելք:

**Տարածաշրջանից դուրս.** 6.1 մագնիտուդով երկրաշարժ է գրանցվել փետրվարի 22-ին Արգենտինայի հյուսիս-արևմտյան հատվածում, մոտավորապես 590 կմ խորությամբ, տուժածներ կամ ավերածություններ չկան: Ստորգետնյա ցնցումները թույլ զգացվել են տեղի բնակիչների կողմից:

«ՍՊԾ» գործակալություն

## եղանակի տեսություն

### Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

**Հանրապետության տարածքում՝**

Մարտի 1-ին, 2-ի գիշերը, 3-ին երեկոյան ժամերին, 4-5-ին՝ շրջանների զգալի մասում, 2-ի ցերեկը արեւելյան շրջաններում սպասվում են տեղումներ, մարտի 3-ի գիշերը սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին՝ հարավ-արևմտյան՝ 2-7 մ/վրկ, առանձին վայրերում սպասվում է քամու ուժգնացում, պոռթկումները 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը մարտի 3-ի գիշերը կնվազի 4-5 աստիճանով, 4-ի գիշերը նույնքանով կբարձրանա:

Օդի ջերմաստիճանը մարտի 1-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ -3...-8, Տավուշում՝ -1...+2, Լոռիում՝ -3...+1, Արագածոտնի նախալեռներում՝ +1...+4, Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում՝ +2...+5, Սյունիքի նախալեռներում՝ -2...+3, Ար-

ցախում՝ 0...+3 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը մարտի 1-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ -1...+4, Տավուշում՝ +6...+10, Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝ +4...+9, Արագածոտնի նախալեռներում՝ +6...+9, Արարատյան դաշտում՝ +7...+10, Սյունիքի հովիտներում՝ +8...+13, Արցախում՝ +5...+10 աստիճանի սահմաններում:

### Երեւան քաղաքում

Մարտի 1-ին, 2-ի գիշերը, 3-ին երեկոյան ժամերին, 4-5-ին սպասվում են տեղումներ, մարտի 3-ի գիշերը, 2-ի ցերեկը սպասվում է առանց տեղումների եղանակ: Օդի ջերմաստիճանը մարտի 1-ի գիշերը կտատանվի +3...+5, ցերեկը +7...+9 սահմաններում:



## Արտակարգ իրավիճակներ ԼՂՀ-ում

**Փետրվարի 21-28**

**Հրդեհ**  
Փետրվարի 22-ին հրդեհ է բռնկվել Քաղաքալի շրջանի Բազմատուս գյուղի տարածքում: Դեպքի վայր է մեկնել 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Բռնկված հրդեհի հետևանքով այրվել է մոտ 10 հա չոր խոտ:

**Փետրվարի 26-ին** հրդեհ է բռնկվել Մարտակերտ քաղաքի Մաշտոցի փողոցում: Դեպքի վայր է մեկնել 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է տեղի ուժերով: Բռնկված հրդեհի հետևանքով այրվել է խանութում տեղադրված էլեկտրահաշվիչը:

**Խոզի ժանտախտ**  
Փետրվարի 21-ին տեղեկություն է ստացվել այն մասին, որ Մարտակերտի շրջանի Մեծ Շեն համայնքում անկվել է մեկ գլուխ խոզ:

Փետրվարի 22-ին տեղեկություն է ստացվել այն մասին, որ Ասկերան քաղաքում Ա.Շահումյան հասցեում անկվել է 18 գլուխ խոզ:

**ԼՂՀ ԿԱ փրկարար ծառայության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին**



# Մարտի 1-ը Քաղաքաշտպանության համաշխարհային օրն է

## Յուրաքանչյուր տարվա մարտի 1-ին միջազգային հանրությունը նշում է Քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օրը:

Քաղաքացիական բնակչության պաշտպանվածության հարցը հատկապես սրվում է պատերազմական իրավիճակներում: Առաջինը դա գիտակցեց ֆրանսիացի վիրաբույժ, գեներալ Սանտ Պոլը, որը 1931 թ. Փարիզում հիմնեց «Ժնևյան գոտիներ» ասոցիացիան: Այն նպատակ ուներ առանձնացնել չեզոք գոտիներ կամ բաց քաղաքներ, որտեղ պատերազմների ժամանակ կարող էր ապաստանել որոշակի կարգի քաղաքացիական բնակչությունը: 1936 թ. Իսպանիայում քաղաքացիական պատերազմի եւ 1937 թ. Ճապոնիայի ու Չինաստանի միջև կոնֆլիկտի ժամանակ ասոցիացիայի ակտիվ գործունեությունը թույլ տվեց Իսպանիայի Սադրիդ եւ Բիլբաո, ինչպես նաեւ Չինաստանի Շանհայ ու Նանկին քաղաքներում քաղաքացիական բնակչության համար ստեղծել չեզոք գոտիներ:

1958 թ. «Ժնևյան գոտիներ» միջազգային ասոցիացիան վերածվեց քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության (ՔՊՄԿ): Կազմակերպության գործառույթները զգալիորեն ընդլայնվեցին՝ քաղաքաշտպանության ազգային կազմակերպությունների միջև կապերի հաստատում, բնակչության պաշտպանության բնագավառում ուսումնասիրությունների անցկացում, փորձի փոխանակման կազմակերպում, արտակարգ իրավիճակներում կանխմանը, պատրաստությանն ու գործողություններին ուղղված ջանքերի համակարգում:

1972 թ. ՔՊՄԿ անդամ-պետությունների ներկայացուցիչները հաստատեցին կազմակերպության կանոնադրության ներկայիս տեքստը: Կանոնադրությունն ուժի մեջ մտավ 1972 թ. մարտի 1-ին եւ կազմակերպությանը տրվեց միջազգային միջկառավարական կազմակերպության կարգավիճակ:

1986 թ. Չեռնոբիլի աղետը եւ 1988 թ. Սպիտակի երկրաշարժը, որոնք բազմաթիվ զոհերի եւ միլիարդների հասնող վնաս

սի պատճառ դարձան, ստիպեցին նորովի նայել քաղաքաշտպանության դերակատարությանը: Ակնհայտ էր, որ այն չի կարող իր գործունեությունը սահմանափակել միայն պատերազմի ժամանակահատվածով: Առկա ուժերն ու միջոցները պետք է արդյունավետ օգտագործվեն նաեւ խաղաղ պայմաններում, հատկապես՝ վթարների, տարերային ու տեխնածին աղետների հետեւանքները վերացնելիս:

1994 թ. ապրիլից Հայաստանը Քաղաքաշտպանության միջազգային կազմակերպության (ՔՊՄԿ) անդամ է: ՔՊՄԿ-ն ամեն տարի ընդունում է քաղաքաշտպանության միջազգային օրվան նվիրված մի կարգախոս:

1999 թ. - Քաղաքաշտպանությունը պետք է դառնա դպրոցական ծրագրի մի մաս:

2000 թ. - Քաղաքաշտպանությունը՝ կայուն զարգացման միջոց

2001 թ. - Կանադայից ստացված քաղաքացիական պաշտպանությունը

2002 թ. - Քաղաքաշտպանության հիմնական տարրերը

2003 թ. - Քաղաքաշտպանությունը՝

աղետներին դիմակայելու միջազգային համերաշխության միջոց

2004 թ. - Քաղաքաշտպանությունը եւ անվտանգությունը ճանապարհների

2005 թ. - Քաղաքաշտպանությունը եւ շրջակա միջավայրի պաշտպանությունը

2006 թ. - Քաղաքաշտպանությունը դպրոցում

2007 թ. - Քաղաքաշտպանությունը եւ աշխատավայրում անվտանգության ապահովումը

2008 թ. - Քաղաքաշտպանությունը եւ առաջին օգնության հնարավորությունը

2009 թ. - Քաղաքաշտպանությունը, կանխարգելիչ տեղեկատվությունը եւ հաղորդակցության հնարավորությունը

2010 թ. - Աղետների բժշկություն

2011 թ. - Կնոջ տեղն ու դերը քաղաքաշտպանության համակարգում

2012 թ. - Քաղաքաշտպանությունը եւ կենցաղային վթարները

**2013 թ. - Քաղաքաշտպանությունը եւ քաղաքացիական հասարակության պատրաստումն աղետների ռիսկի կանխարգելմանը:**

## Քաղաքաշտպանությունը եւ քաղաքացիական հասարակության պատրաստումն աղետների ռիսկի կանխարգելմանը

Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Նավաֆ ալ Սլեյբիի ուղերձը

Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպությունն ամեն տարի մարտի 1-ին նշում է Համաշխարհային քաղաքացիական պաշտպանության օրը, որը խորհրդանշում է իր կանոնադրության ուժի մեջ մտնելը որպես միջկառավարական կազմակերպություն:



նախությունների զարգացմանը, որը ՔՊՄԿ-ի կանոնադրությամբ հաստատված կարեւորագույն առաքելություններից է:

Հետազոտությունները եւ ոլորտային փորձը ցույց են տալիս, որ քաղաքաշտպանության եւ արտակարգ իրավիճակների ծառայությունների, անկախ լավ պլանավորումից, ուժի եւ ռեսուրսների քանակից, որոնք հասանելի են իրենց առաքելությունների իրականացման շրջանակներում, միայնակ չեն կարող ապահովել իրենց բնակչության եւ շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Քանի որ մենք ապրում ենք գլոբալիզացիայի դարաշրջանում, որը բնութագրվում է մեծ տեխնոլոգիական զարգացումներով եւ համայնքների միջև առկա կապով ամբողջ աշխարհով մեկ, անհրաժեշտություն է առաջացել քաղաքացիական հասարակական կազմակերպությունների ներգրավել աղետների ռիսկի նվազեցման գործում եւ պատրաստել բոլոր տեսակի արտակարգ իրավիճակներին:

Այսօր ամենատարբեր մարդասիրական եւ բարեգործական կազմակերպություններ գարգացում են ապրել տարբեր ոլորտներում՝ լինելով հատուկ համոզմունքների, որոշակի նպատակների կամ երբեմն այլ երկրներից սերտած փորձի եւ փորձառության արդյունք:

Մենք պետք է գնահատենք եւ հարգենք քաղաքացիական հասարակական կազմակերպությունները: Փաստորեն՝ վերջին

երկու տարիների ընթացքում այս կազմակերպությունները չվարանցեցին օգնել աղետի ենթարկված տարածաշրջաններին՝ հոգավոր հարյուր հազարավոր զոհերի եւ փախստականների մասին: Նրանք օգնում են պետական մարմիններին մեղմել փախստականների տառապանքները, հատկապես նրանց, ովքեր աղետների հետեւանքով ստիպված են եղել թողնել ամեն ինչ եւ անվտանգ տարածքներ փնտրել հարեւան երկրներում: Այս կազմակերպությունները միասնաբար էին հանդես գալիս՝ անկախ իրենց դավանանքից, ազգությունից եւ կանոնակարգից:

Ես ցանկանում եմ կրկին շնորհակալություն հայտնել քաղաքացիական հասարակական ասոցիացիաներին եւ կազմակերպություններին՝ այն աջակցության համար, որ նրանք տրամադրում են Քեմիայի ու Սոմալիի կամ Սիրիայի փախստականներին, ինչպես նաեւ Հորդանանին կամ տարբեր ազգության փախստականների թունիսում, Ասիայում եւ այլուր:

Այս կազմակերպությունները եւ գործակալությունները, որոնք մասնագիտացած են արձագանքման եւ կառավարման մեջ աղետային ու ճգնաժամային իրավիճակներում, ապացուցեցին, որ շատ արդյունավետ եւ պրոֆեսիոնալ են: Փախստականներին, վիրավոր եւ աղետի ենթարկված մարդկանց տրամադրվող այս աջակցությունն ու օժանդակությունը օգնել է նրանց ապրելու ամենամեծ հուզական փորձը եւ մեղմացնել նրանց ընտանիքների տառապանքը ինչպես իրենց սեփականը:

Ես հրավիրում եմ քաղաքաշտպանության, ինչպես նաեւ արտակարգ իրավիճակների բոլոր ծառայություններին օգտվել այս լծակներից՝ ներգրավելով նրանց կամավորների հավաքագրման եւ քաղաքացիական հասարակության ձեւավորման գործին: Քանի որ աղետներն ունեն ուղիղ ազդեցություն նահանգի տնտեսության, զարգացման եւ քաղաքացիների բնականոն կյանքի վրա՝ մենք ներկայումս սերտորեն համագործակցում ենք ՄԱԿ-ի եւ միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաեւ համաշխարհային բարեգործական եւ քաղաքացիական պաշտպանության կազմակերպությունների ու ասոցիացիաների ցանցի հետ՝ ստեղծելով

արդյունավետ համակարգ եւ ձեւավորելով հստակ նպատակներ այս կազմակերպությունների եւ ասոցիացիաների համար: Սա նրանց թույլ կտա պատշաճ կերպով իրականացնել իրենց պարտականությունները: ՁԼՄ-երը եւս կոչված են առավել քան երբեւէ խաղաղ կարեւոր դեր՝ օգնելով քաղաքաշտպանության կազմակերպություններին եւ արտակարգ իրավիճակների ծառայություններին՝ պատրաստելով քաղաքացիական հասարակություններին: Ցավոք, իրականում մենք կորցրել ենք մի շարք մեր գործընկերների: Մենք չենք մոռանա այն կազմակերպություններին, որոնք կորցրեցին իրենց անդամներին եւ աշխատակիցներին, երբ արձագանքում էին այլ երկրներում տեղի ունեցած աղետային իրավիճակներին:

Այս տարի մենք հույս ունենք, որ այս նախաձեռնությունը սկիզբ կդառնա ճիշտ ուղու վրա դնել կամավորների հավաքագրման եւ քաղաքացիական հասարակությունների իրազեկվածության բարձրացման երկարաժամկետ կայուն ծրագիրը, այնպես որ մենք կարողանանք օգուտ քաղել մարդկային այս ներուժից եւ կանխել նրա անհետացումը:

Հասարակական կազմակերպությունները նման են գնացքի, որը տանում է տարբեր սոցիալական խավերի ուղեւորների՝ ներառելով թե հարուստին եւ թե աղքատին, գրագետին, անգրագետին, աշխատողին եւ գործազուրկին, գյուղացուն եւ բանվորին, տարեցին եւ երիտասարդին:

Քաղաքացիական կազմակերպությունների համաշխարհային ցանցը ներկայացնում է մի հարթակ, որը կհամախմբի նման կազմակերպությունների կարողությունները: Սակայն մենք չենք ցանկանում, որպեսզի այս ցանցը կատարի սեզոնային աշխատանք, այլ ապահովի երկարաժամկետ եւ հեշտ հասանելի ծրագիր՝ անվտանգ տներ եւ համայնքներ կառուցելու տեսանկյունից:

Մեր ապահով ապագան հիմնված է համերաշխության, մոբիլիզացման, կամավորների հավաքագրման եւ հասարակության պատրաստվածության վրա:

Այնպես որ, եկեք աշխատենք համերաշխ, ինչպես նաեւ բարձրացնենք հասարակության պատրաստվածությունը, որպեսզի ապահովենք ավելի լավ ապագա:

# մասնագետի անկյուն



## Անվտանգության դպրոց, կամ ինչպես գործել էքստրեմալ իրավիճակներում

### Յրդեհ. ինչպես վարվել հրդեհի դեպքում. օրինակներ առօրյա կյանքից

Վաղուց հայտնի է, որ սթրեսային իրավիճակներում մարդկային վարքը որոշվում է վախի զգացումով: Առաջին հերթին դա վերաբերվում է հրդեհի ժամանակ մարդկանց պահվածքին: Այդ դեպքում մարդկանց գործողությունները դառնում են անկառավարելի, իսկ նյարդային լարվածությունն ակտիվացնում է նրանց մեջ «նիհիլոզ» բոլոր բնագոյները: Դա արտահայտվում է նրանում, որ մարդը զգում է էներգիայի ներհոսք, մկանային ակտիվության ավելացում, իր մեջ հայտնաբերում է արագելներ հաղթահարելու ունակություններ:

Լուրջ վտանգի դեպքում մարդու գիտակցությունը կարծես վերացարկվում է, կորցնում է իրարարժույթը: Որպես հետևանք, հրդեհի առաջացման ժամանակ գործողությունները դառնում են անհամաձայնեցված, հաճախ կատարվում են կիսավտոմատ վիճակում՝ առանց գիտակցության վերահսկման: Այդպիսի վիճակում մարդկանց տարահաման ժամանակ խուճապային վայել ստեղծում է այնպիսի իրավիճակներ, երբ կարող են առաջանալ խցանումներ տարահաման ուղիների վրա: Մարդիկ կարող են նաև անտեսել ազատ անցուղիները, չհնարավորվել պահանջները: Սթրեսային իրավիճակում գործակալները անբողջությամբ կորում է շրջապատող իրադրության վերլուծման ու գնահատման կարողությունը:

Տարահաման գործընթացի արագությունը եւ արդյունավետությունը մեծապես պայմանավորված է մարդկանց անարգել տեղաշարժման հնարավորությամբ: Շարժման ժամանակ մարդիկ պետք է հստակորեն տեսնեն տարահաման ելքերը կամ դրանց ցուցիչները: Տեսանելիության կորստի դեպքում խախտվում է մարդկանց կազմակերպված տեղաշարժը եւ դառնում քսոսային, ամեն մեկը շարժվում է կամայականորեն ընտրված ուղղությամբ: Արդյունքում դժվարանում է մարդկանց տարահամանը, իսկ երբեմն էլ դառնում անհնար, ինչը հանգեցնում է վախի, անվստահության ու խուճապի:

Սովորական պայմաններում շարժումը կարգավորվում է մարդու գիտակցական կամքով, իսկ հրդեհի ժամանակ տարահաման գործընթացը սկսվում է միաժամանակ բոլորի կողմից: Սովորական պայմաններում մարդիկ կարող են տեղաշարժվել ցանկացած ուղղությամբ, իսկ հրդեհի դեպքում բոլորը շարժվում են դեպի ելքերը, այսինքն, շարժումը կատարվում է մեկ ուղղությամբ:

Սովորական պայմաններում, որպես կանոն, շարժվող հոսքերում բացակայում է մարդկանց ճնշումը մեկը մյուսի վրա: Հրդեհի ժամանակ, կապված հոգեբանական գործոնի կամ անբարենպաստ պայմանների ազդեցության հետ, մարդկանց մի մասը ֆիզիկական ջանքեր է ներդնում վտանգավոր գոտուց արագ հեռանալու համար: Դրա պատճառով տարահաման ուղիներում մարդկային հոսքերի խտությունը զգալիորեն գերազանցում է նորմալ պայմաններում շարժվելու ժամանակվա խտությանը եւ երբեմն հասնում է սահմանային արժեքների՝ 10-12 մարդ՝ մեկ քառակուսի մետրի վրա: Առանձին դեպքերում, տարահաման գործընթացի սխալ կազմակերպման եւ ոչ լիարժեք ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումների պատճառով, կարող է առաջանալ խուճապ՝ ինչը զգալիորեն կբարդացնի տարահամանը:

Ստորեւ ներկայացվող շարքում կանդորդառանց մարդկանց առօրյա կյանքում առավել հաճախ հանդիպող հրդեհային իրավիճակների (իրադրությունների) փորձելով պարզել դրանց առաջացման հիմնական պատճառները, կանխարգելման համար անհրաժեշտ միջոցներն ու միջոցառումները,

ինչպես նաև հրդեհի դեպքում իրականացվող գործողությունները:

#### Իրադրություն. հրդեհ բնակարանում: Ֆիմնական պատճառները.

- Առանց հսկողության մնացած երեխաների խաղը լուցկու եւ զանազան էլեկտրասարքերի հետ.
- Անկողնում ծխելը, հատկապես՝ անթափ վիճակում.
- Կրակի հետ անզգույշ վարմունքը (տարբեր ներկերի ու մածիկների տաքացմանը, սպիտակեղենի չորացմանը ջեռուցման սալիկի կամ վառարանի վերելում, եւ այլն).
- Էլեկտրասարքերի եւ լամպերի տեղափոխումը վարագույնների, պաստառների ու փայտյա կառուցատարրերի անմիջական հարեւանությամբ.
- Էլեկտրական վարդակին մեծ թվով սպառիչների միաժամանակյա միացումը.
- Էլեկտրական հաղորդալարերի կարճ միակցումը (միացումը).
- Հագուստի մաքրման համար բենզինի ու տարետեսակ լուծիչների օգտագործումը.
- Սեղանի լամպերի ծածկելը թղթով կամ կտորով, եւ այլն:

#### Ֆիմնական պատճառները. Ֆիմնական պատճառները.

- Գործողությունները.
- Անմիջապես ահագնեցող հրշեջներին ինքները կամ հարեւանների միջոցով: Հրդեհի մասին հայտնեք հարկի հարեւաններին, խնդրեք նրանց անվտանգ տեղ դուրս բերել երեխաներին ու տարեցներին, ինչպես նաև մյուս հարկերի բնակիչներին եւ տեղեկացնել հրդեհի մասին.
- Չսպասելով հրշեջների ժամանմանը հարեւանների օգնությամբ սկսեք մարել հրդեհը ձեռքի տակ եղած միջոցներով (կրակ-մարիչ, լվացքի փոշի, խիտ, թաց կտոր, ջուր եւ այլն): Եթե կա հոսանքահարման վտանգ՝ անջատեք բնակարանի էլեկտրամատակարարումը.

• **Ֆիմնական պատճառները.** որ դյուրավառ հեղուկները ջրով հանգցնելն անարդյունավետ է: Ավելի լավ է օգտագործել կրակմարիչ, իսկ դրա բացակայության դեպքում՝ թաց կտոր, ավազ կամ նույնիսկ ծաղկամանի հող.

• Մի՛ բացեք դռներն ու պատուհանները, մի՛ կտորեք ապակիները, որպեսզի խուսափեք դեպի հրդեհի օջախ օդի ներհոսքից: Իսկ եթե այնուամենայնիվ անհրաժեշտ է բացել դեպի այրվող սենյակ տանող դուռը, արեք դա կանգնելով դռան կողային մասում եւ ձեռքերով ծածկեք դեմքը, որպեսզի չայրվեք դուրս ետևված բոցից.

• Եթե սեփական ուժերով անհնար է վերացնել այրման օջախը, ապա անմիջապես հեռացեք բնակարանից՝ պինդ փակելով դուռը: Հարեւանների օգնությամբ ջուր ցանեք դռան վրա, որպեսզի կանխեք հրդեհի տարածումը.

• Կազմակերպեք հրշեջ ստորաբաժանումների դիմավորումը, նրանց ցույց տվեք հրդեհի օջախի տեղը եւ հայտնեք այրվող բնակարանում գտնվող մարդկանց մասին.

• Եթե անհնար է տարահամել աստիճանավանդակներով, ապա օգտվեք արտաքին հրշեջ սանդուղքներից: Եթե դրանք չկան դուրս եկեք պատշգամբ, պինդ փակեք դուռը եւ աղաղակներով կամ այլ կերպ փորձեք հրավիրել անցորդների ու հրշեջների ուշադրությունը: Մի՛ փորձեք ինքնուրույն տեղափոխվել հարեւան պատշգամբ՝ դա շատ վտանգավոր է.

• Խորհուրդ ենք տալիս վաղօրոք ապահովագրել ձեզ եւ ձեր ունեցվածքը հրդեհից: Փաստաթղթերն ու փողը պահեք ընտանիքի բոլոր անդամներին հայտնի տեղում՝ հրդեհի ժամանակ անսպասելի տարահաման դեպքում անակնկալի չգալու համար:

#### Իրադրություն. հրդեհ խոհանոցում: Ֆիմնական պատճառները.

- Դյուրավառ նյութերի պահումը (հատկապես՝ բաց տարաներով).

• Իրերի, առարկաների, վարագույնների գազօջախից կամ էլեկտրական սալօջախից անթույլատրելի հեռավորության վրա գտնվելը.

• Առանց հսկողության թողնված կերակուրը, որը կարող է հանգցնել գազօջախը՝ առաջացնելով պայթյուն եւ հրդեհ.

• Սալօջախի վրա գանազան մածիկների, ներկերի, պարաֆինի տաքացմանը, որն անխուսափելիորեն հանգեցնում է այդ նյութերի գոլորշիների բռնկմանն ու հրդեհի.

• Այրվող յուղի վրա ջուր լցնելը, ինչպես նաև լվացարանի մեջ թափելը: Որպես կանոն, դա նպաստում է կրակի տարածմանը ամբողջ խոհանոցով մեկ:

#### Հիշե՛ք.

- Սննդային յուղերը շուրջ 450°C ջերմաստիճանի դեպքում ինքնաբոցավառվում են.
- Էլեկտրական սալիկի պարույրի գերշեկացումից առաջանում է կարճ միացում եւ հալված մետաղի կայծերից ու շիթերից բռնկվում է խոհանոցի կահույքը.
- Միացված էլեկտրական սալիկի մարումը ջրով խիստ վտանգավոր է:

#### Ձեր գործողությունները.

• Եթե բռնկվել է կաթսայի (թավայի) մեջ գտնվող յուղը, փակեք կափարիչով կամ թաց կտորով, սպասեք մինչեւ յուղի սառելը (հալառակ դեպքում կրակը նորից կբռնկի).

• Կոշտ կտորից թաղիչը զգուշությամբ գցեք այրվող տարայի վրա՝ օդի ներհոսքը փակելու համար: Եթե այրվող յուղը, ճարպը թափվել է հատակին կամ պատերին՝ կրակի մարման համար օգտագործեք ցանկացած լվացքի փոշի.

• Էլեկտրական սալիկի գերտաքացման դեպքում սկզբում պետք է անջատել այն, հետո պարույրը ծածկել թաց կտորով.

• Եթե չի հաջողվում հանգցնել կրակը՝ շտապ ահագնեցեք հրշեջ պահպանությանը, զգուշացրեք հարեւաններին: Փակեք խոհանոցի դուռը, միջանցքից ջուր լցրեք դրա վրա՝ կանխելով հրդեհի հետագա տարածումը բնակարանում:

#### Իրադրություն. կրակը պատշգամբում: Ֆիմնական պատճառները.

• Պատշգամբների ծանրաբեռնումը գանազան անպետք իրերով, հին կահույքով, մակուլատուրայով եւ այլն, որոնք լավ «սնունդ» են հանդիսանում կրակի համար.

• Մաքրող, դյուրավառ հեղուկների պահումը դրանց պահման համար չնախատեսված տարաներում եւ պայմաններում.

• Երեխաների խաղալը կրակի հետ.

• Անզգույշ ծխելը:

#### Հիշե՛ք.

• Միշտ ազատ պահեք հրշեջ սանդուղքներն ու եանցքերը, նույնը պահանջեք ձեր ներքեւի հարեւաններից՝ դա կփրկի ձեր կյանքը հրդեհի ժամանակ.

• Ապակեպատված պատշգամբը հրդեհի ժամանակ կրակի ու ծխի պարզարան է (կուտակման վայր), որը կարող է դժվարացնել ձեր տեղաշարժը դեպի ներքեւի հարկերը.

• Պատշգամբում մշտապես պահեք ավազ.

• Պատշգամբի դուռը միշտ փակ պահեք, որպեսզի փոքրահասակ երեխաները ձեր բացակայության դեպքում չկարողանան այնտեղ խաղալ կրակի հետ (դռան վրա պատրաստեք երեխաների համար անհասանելի լրացուցիչ փակված).

• Եթե ծխում եք պատշգամբում, ծխախոտի մնացորդները հանգցրեք ջրով լցված մետաղական տարայի մեջ, որպեսզի բամբին չտարածի կայծերը: Նույնը խնդրեք անել նաև ձեր վերեւի հարեւաններին:

#### Ձեր գործողությունները.

• Ծխի հոտ զգալիս անմիջապես գանգահարեք 1-01 հեռախոսահամարով, տեղեկացրեք հարեւաններին եւ նրանց օգնության կանչեք.

• Հանգցրեք կրակը ձեռքի տակ եղած բոլոր հնարավոր միջոցներով, քանի որ նման դեպքերում կրակն արագորեն տարածվում է վերին հարկերի բնակարաններ եւ բազմա-



թիվ մարդիկ հայտնվում են վտանգավոր գոտում.

• Համոզվելով, որ պատշգամբի տակ չկան մարդիկ ու ավտոմեքենաներ, կարելի է այրվող իրերը ներքեւ նետել.

• Եթե մինչեւ հրշեջների ներկայանալը դուք ինքներդ չեք կարող սանձել կրակը, ապա պինդ փակեք պատշգամբի դուռն ու օդանցքը, որպեսզի կրակը չտարածվի դեպի սենյակ: Այնուհետեւ բնակարանից դուրս հանեք հրդեհի մարմանը՝ չմասնակցող մարդկանց.

• Հարեւանների օգնությամբ սենյակից դուրս բերեք թանկարժեք իրերը, որոնք կարող են վնասվել հրդեհաշիջման ժամանակ (ջրից կամ փրփուրից).

• Մի՛ կանգնեք պատուհանին շատ մոտ, քանի որ շիկացած ապակին կտրվում է նրա վրա ջուր լցնելուց եւ դուք կարող եք ստանալ վնասվածք կամ այրվածք:

#### Իրադրություն. հրդեհ շենքի մուտքում: Չի՛ կարելի.

• Գերազանհատել սեփական ուժերն ու հնարավորությունները.

• Ինքնուրույն պայքարել հրդեհի դեմ առանց հրշեջներին նախօրոք ահագնեցելու.

• Գույքը փրկելու համար կյանքը վտանգի ենթարկել.

• Փորձել դուրս գալ դեպի ծխապատված երկար միջանցք կամ սանդղաբազուկներ (ծուխը շատ թունավոր է, իսկ գերտաքացած օդը (գազերը) կարող է այրել թոքերը).

• Իջնել տանիքի ջրահոսային խողովակներով կամ պատուհաններից սավանների ու պարանների օգնությամբ (ընկնելը համարյա միշտ անխուսափելի է).

• Դուրս թռչել պատուհաններից (սկսած 4-րդ հարկից, ամեն երկրորդ թռիչքը մահացու է եւ ունենում).

• Տարահաման ելքերը, դռները, պատշգամբների ելանցքերը, ինչպես նաև դեպի հարակից հատվածամասեր եւ հրշեջ սանդուղքներ տանող անցումները ծանրաբեռնել գանազան կահույքով, տնային այլ գույքով.

• Լարվածության տակ գտնվող էլեկտրասարքավորումների մարումը ջրով.

• Թաքնվել պահարաններում, պահեստանոցներում, անկյուններում եւ այլն.

\* Սոռանալ, որ ձեր առաջին թշնամին ոչ թե կրակն է, այլ ծուխը, որը կուրացնում ու խեղդում է.

• Մատնվել խուճապի:

#### Ձեր գործողությունները.

• Անհապաղ գանգահարեք 1-01, տեղյակ պահեք հարեւաններին ու նրանց հետ միասին դուրս եկեք աստիճանահարթակ նախապես վերցնելով դույլերով ջուր, խիտ գործվածք, կրակմարիչներ.

• Եթե հնարավոր է՝ պարզեք այրման տեղը (բնակարան, վերելակ, աղբախցիկ եւ այլն) եւ թե ինչ է այրվում (էլեկտրական հարողորագծեր, աղբ, թուղթ, դյուրավառ հեղուկներ եւ այլն).

• Կիպ փակեք դռները՝ ծխի տարածումը դեպի բնակարաններ կանխելու նպատակով:

Շարունակելի



## Միջին փարիքի ճգնաժամ

**Մ**ենք բազմիցս խոսել ենք տարիքային ճգնաժամերի մասին, որոնք բավական բուռն են ընթանում և ունենում են հետևանքներ:

Այսօր կանդորդառանց միջին տարիքի ճգնաժամի առանձնահատկություններին, կփորձենք պատասխանել բոլոր այն հարցերին, որոնք առավել անհանգստացնում են այդ տարիքի մարդկանց և մեր խորհուրդներով հնարավորինս օգտակար լինել:

Շատ մասնագետներ վստահեցնում են, որ դա տարիքային մի շրջան է, որը մարդուն նոր հնարավորություններ է տալիս, չնայած որ շատ բուռն է և բեկունային:

Անցումային տարիքում գտնվող շատ մարդիկ այդ փոփոխությունները հաղթահարում են լուռ և երբեմն էլ ամոթի զգացում ունենալով: Մտածելով, որ նման փոփոխություններ կատարվում են միայն իրենց հետ, որոնց մասին պետք չէ բարձրաձայնել և ուրիշների հետ կիսվել, խորհրդակցել: Կարելի է ասել՝ մարդն իր կյանքի ընթացքում ունենում է երկու մեծ ճգնաժամային շրջան՝ դեռահասության և միջին տարիքի ճգնաժամերը: Այս երկու դեպքում էլ մենք փոխում կան վերակառուցում ենք մեր վերաբերմունքը աշխարհի նկատմամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կանայք ավելի դժվար են հաղթահարում միջին տարիքի ճգնաժամը: Կանանց մոտ ռեսուրսներն ուղղված են ֆիզիկական ուղրտին՝ մասնավորապես, առողջության, զեղեցկության, իսկ տղամարդ-

կանց մոտ սոցիալական ուղղվածություն ունեն:

Տարիքի հետ փոխվում են մարդու դրսևորումները: Կյանքի սկզբնական շրջանում, այսինքն՝ երիտասարդ տարիքում, մարդը ձգտում է դեպի դուրս: Սեփական ամբողջականությունը ձեռավորելու համար նա ուղղորդվում է ծնողների, ուսուցիչների, ընկերների կայացմանը, քանի որ այդ տարիքում պահանջները բոլորովին այլ են: Իսկ արդեն 40-50 տարեկանում դիտվում է լիովին հակառակ ուղղվածություն, մարդն ամբողջությամբ ուղղվում է իր ներքին աշխարհի բովանդակության վրա: Եւ այս տարիքում պահանջներն են ավելի հոգեւոր են դառնում: Հոգեբանական խորհրդատվության ժամանակ բազմիցս է հնչում հետևյալ արտահայտությունը. «Ես ունեմ հրաշալի ընտանիք, ապահովված կյանք, լավ ընկերներ, հարմարավետ տուն, սակայն ամեն առավել տարբերումն են դատարկության և տագնապի զգացողությանը»: Այս տարիքում առավել ակնհայտ են ակտուալ խնդիր է դառնում կյանքի իմաստը:

### ԻՆչ անել

#### Աջակցություն ընկերներից, հարազատներից, մասնագետից

Աջակցություն խնդրել ուրիշից այնքան էլ հեշտ չէ: Դա կախված է մարդու անհատականությունից: Ոմանք նախընտրում են դիմել մտերիմների օգնությանը, ոմանք՝ մասնագետի: Այստեղ պարզորոշ այն է, որ եթե մարդը շրջապատված է հարազատ մարդկանցով, ապա նա ավելի հեշտությամբ կդի-

մի հոգեբանի, չնայած որ նման հարաբերությունների կարիք այդքան էլ չունի: Իսկ այն մարդը, որը միայնակ է, և ավելի շատ հոգեբանի կարիք ունի, քիչ հավանական է, որ կդիմի հոգեբանի: Պարզապես նրա մոտ չկա միջանձնային փոխհարաբերությունների հմտություն:

Շատերը հրաժարվում են անսալ իրենց ներքին ծայրին, տեսնել են ընդունել իրենց ներսում կատարվող փոփոխությունները: Նրանք չեն ուզում ոչինչ փոխել և մեղմացնում են իրենց ցավերը դեղահաբերի միջոցով: Սեղադրում են իրենց և ընկնում են դեպրեսիայի մեջ: Այստեղ պարզապես պետք է ականջալուր լինել մեր սեփական մարմնի և հոգու ծայրին:

### Ինչպե՞ս պատասխանել ներքին ձայնին

Ներքին ձայնին պատասխանել նշանակում է վերանայել և վերագնահատել ձեր սեփական կյանքը, հարաբերությունները շրջապատի հետ, ընդունել սեփական մարմինը, հասկանալ, որ նա այլևս այնպիսին չէ, ինչպիսին ռաշտ էր: Կարող եք ձեզ հարցեր տալ ձեր կյանքի ցանկացած ոլորտից՝ աշխատանք, ընտանիք, անձնական կյանք, ընկերներ և այլն:

Այս տարիքային փուլը կարծես թե նման է բոժոժի, որը, ժամանակը գալուն պես, վերածվելու է թիթեռի: Լսեք ձեր ներքին ձայնին և նա ձեզ խաբի: Այստեղ մարդը վախենում է կորցնել իր առաջվա կերպարը, դերը կյանքում, ստատուսը, այն ամենը, ինչը նա ձեռք է բերել կյանքի ընթացքում: Այս-



տեղ, եթե մարդը չի թողնում իր նախկին «Ես»-ը, ապա կորցնում է ավելին, քան մինչ այդ ուներ: Այստեղ շատ կարևոր է, թե մարդը որքանով է հասուն ու պատրաստ այդ ամենին: Այս տարիքում մարդն սկսում է ուշադրություն դարձնել բոլորովին այլ բաների վրա, որոնք մինչ այդ իրեն չէին անհանգստացնում: Այդ իսկ պատճառով այս տարիքում առավել ակտուալ է դառնում կրոնով, արվեստով հետաքրքրվելը:

### «Իրական Ես»-ի ան

Այս տարիքում գիտակցելով, որ այլևս հնարավոր չէ անել այն, ինչ անում են երիտասարդ տարիքում, և հասկանալով, որ ձեր կյանքն ընթանում է այստեղ և հիմա սկզբունքով, այլ ոչ թե անցյալում, առաջին քայլն են անում «Իրական Ես»-ը՝ զարգացնելու ճանապարհին: Այս տարիքում մարդը հնարավորություն է ունենում արտահայտելու իր «Ես»-ի այն կողմերը, որոնք մինչ այդ թաքցված էին: Այս տարիքում մարդը ձգտում է մերձիկ ամբողջության, կարիք է ունենում միավորելու և արտահայտելու իր «Ես»-ի բոլոր կողմերը:

ԱճՈՒՄ Կարապետյան  
հոգեբան-խորհրդսույն

### 1. Արտակարգ իրավիճակների քաղաքականության ծրագրերի վարչության զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 34-3.2-42):

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է միջազգային միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագիր, հուշագիր, արձանագրություն) նախագծերի նախապատրաստման ու մշակման աշխատանքներին, մասնակցում է ԱԻՆ փրկարար ծառայության, «Սեյմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության, տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի, «Պետական ռեզերվների գործակալություն» և «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» կազմակերպությունների ընթացիկ և հեռանկարային ծրագրերի մշակման աշխատանքներին:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

• Մրցույթը կկայանա 09.04.2013 թ.՝ ժամը 10:00-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

### 2. Քարտուղարության գործավարության կազմակերպման և արխիվային գործերի վարման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 34-3.2-95):

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է նախորդ տարվա մշտական և ժամանակավոր պահպանման ենթակա գործերի անվանացանկի կազմման, մշտական պահպանության ենթակա փաստաթղթերի ընտրության, ցուցակագրման, արխիվային ֆոնդի հաշվառման աշխատանքները, իրականացնում է Աշխատակազմի ոչ գաղտնի փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը և Աշխատակազմում գործավարության միասնական կարգի կիրառման աշխատանքները, ինչպես նաև իրականացնում է Նախարարության մշտական և ժամանակավոր պահպանման ենթակա գործավարությամբ ավարտված փաստաթղթերի արխիվացման գործընթացը:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

• Մրցույթը կկայանա 13.04.2013 թ.՝ ժամը 10:00-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

### 1.2 Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

• բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային

ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդակցությունների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

• սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի բ) ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում:

• համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:  
• անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Յանկեր N 1-2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակներին հետ միասին)՝

• դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ծեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

• տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները, արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գրականային տեղամասին կցագրման վկայականի պատճենը կամ համապատասխան տեղեկանք,

• մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտարարում է Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին

• անձնագրի պատճենը:  
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթի պետք է ներկայանան ՀՀ անձնագրով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 15.03.2013 թ.:

### 3. Ջորահավաքային նախապատրաստության, պետպահուստի պլանավորման և քաղաքացիական պաշտպանության ծրագրերի վարչության գործառնությունների նախապատրաստության և պետպահուստի պլանավորման բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34-4.1-39):

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական պահուստում նյութական արժեքների ձեռավորման (կուտակման, թարմացման, ապամարմարման, փոխառման, փոխարինման) աշխատանքներին, մասնակցում է գործառնության նախապատրաստության և պետական պահուստի պլանավորման աշխատանքներում պետական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեությանը, ինչպես նաև գործառնության նախապատրաստության ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացմանը: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

### 4. Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության Արարատի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության տեսչական բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34-4.2-59):

Բաժնի պետ-ավագ տեսուչի հանձնարարությամբ մասնակցում է տեխնիկական հետազոտությունների իրականացմանը, հաշվառման և սպասարկման տարածքում գտնվող օբյեկտների հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը և դրանք տեխնիկական վիճակի վերաբերյալ գեկուցում է Բաժնի պետ-ավագ տեսուչին, ինչպես նաև մասնակցում է հրդեհների, տեխնածին վթարների և արտադրական դժբախտ դեպքերի առաջացմանը նպաստող պատճառների և պայմանների վերացման ուղղությամբ միջոցառումների մշակման աշխատանքներին:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

3 և 4 կետերում նշված թափուր պաշտոնները

զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

• առնվազն միջակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի,

• սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի բ) ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

• համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:  
Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակներին հետ միասին)՝

• գրավոր դիմում (ծեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

• կրթությունը հավաստող պետական մոնիչի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),

• աշխատանքային գրքույկի պատճենը (ուճեցալու դեպքում),

• քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը, \* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գրականային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

• մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի,

• անձնագրի պատճենը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, միայն աշխատանքային օրերին:

Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթի պետք է ներկայանան ՀՀ անձնագրով:

3 և 4 կետերում նշված թափուր պաշտոնների համար դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 11.03.2013 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար կարող են դիմել նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 31-77-31):



# ԱՒ հանրագիտարան



## Առօրյայից թունավորվածները Քիմիկատները, որոնք շրջապատում են մեզ կենցաղում, կապված են մի շարք հիվանդությունների հետ

**Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱԶԿ) տվյալների համաձայն, յուրաքանչյուր տան մեջ գտնվող քիմիկատները կարող են առաջացնել կրծքագեղձի քաղցկեղ, ասթմա, չբերություն եւ բնածին արատներ:**

ԱԶԿ-ի անդամներն իրենց գեկույցում կարծում են, որ ապագա սերունդների պաշտպանության համար, հնարավոր է, անհրաժեշտ կլինի արգելք դնել քիմիկատների վրա:  
Ձեկույցի տվյալների համաձայն, այնպիսի քիմիական նյութերը, ինչպիսիք են ֆտալատները, կարող են վնաս հասցնել կնոջ վերարտադրողական համակարգին եւ բարձրացնել մանկական հիվանդությունների առաջացման հավանականու-

թյունը, այդ թվում, լեյկեմիայի: Կասկածի տակ է հայտնվել նաեւ բիսֆենոլ A-ն, որը պարունակվում է մի շարք կենցաղային իրերում՝ անագե տարաներում, արեւային ակնոցներում եւ այլն: Ինչպես ենթադրվում է, արհեստականորեն սինթեզված տարրերը, հայտնվելով օրգանիզմում, խանգարում են հորմոնների աշխատանքին:  
«Շագանակագեղձի քաղցկեղի դեպքերի համար կան լուրջ ապացույցներ, որոնք հաստատում են այդ հիվանդության կապը գյուղատնտեսական պեստիցիդների հետ: Կան նաեւ փաստեր, որոնք ցույց են տալիս այդ նյութերի կապը հղիության ժամանակ երեխաների ճարպակալման եւ, հնարավոր է, կրծքագեղձի քաղցկեղի զարգացման հետ», - գրված է գեկույցում:  
ԱԶԿ-ն չի համարձակվում պ-

դել, որ այդ քիմիկատներն, ըստ էության, նշված հիվանդությունների առաջացման պատճառ են, բայց նշում է, որ մի շարք դեպքերի տվյալները դա են ցույց տալիս:  
«Այդ քիմիկատների ազդեցությունը կարող է հանգեցնել գիրության, չբերության, հիշողության վատթարացման, ուսուցման մեջ դժվարությունների, շաքարախտի, սիրտ-անոթային, ինչպես նաեւ մի շարք այլ հիվանդությունների առաջացման»,- նշված է ԱԶԿ-ի գեկույցում:  
«Բարեբախտաբար, եՄ-ն փորձում է համաձայնության գալ հորմոնների աշխատանքին խանգարող քիմիկատները բացահայտելու հարցի շուրջ, որպեսզի դրանց ազդեցությունը հնարավոր լինի վերահսկել», - ասում է Էլիզաբեթ Սոլթեր Գրի-




նը՝ «Չեմ Թրասթ» կազմակերպությունից:  
Քիմիական արդյունաբերության ասոցիացիան հայտարարեց, որ գարեջրում, շոկոլատում

եւ սրճում պարունակվող բնական նյութերը կարող են ավելի մեծ ազդեցություն ունենալ հորմոնների աշխատանքի վրա, քան արհեստական քիմիկատները:

## Դեպի Երկրի կենտրոն ճամփորդության նոր միջոց

**Ամերիկացի ֆիզիկոսներն առաջարկել են Երկրի ենթահողմ ուսումնասիրել դեռ չբացահայտված՝ «բնության հիմքեր ուժի» միջոցով: Միելույն ժամանակ նրանք խոսում են տորսիոնային ձգողականության սահմանների եւ Ստանդարտ մոդելի մեջ չընդգրկված հնարավոր նոր մասնիկների մասին:**



«Տորսիոնային» բառն, ինչպես հայտնի է, գիտական իրեչի պիտակն է համարվում, սակայն դրանում ոչ մի արտառոց բան չկա: Այն նշանակում է «գալարված» եւ պատմականորեն ոչ մի գիտական սուտ իր մեջ չի պարունակվում, այլ սկսվում է հավանականության ընդհանուր տեսությունից՝ նրա այն շարունակություններում, որտեղ, մասնավորապես, խոսքվում է «ուլտրաված» ձգողական դաշտի եւ էլեկտրամագնիսական դաշտի դրա առանձին մասնակի մասին: Նոր մասնիկները պարզապես «հինգերորդ փոխազդեցությունն» ապահովող մասնիկներն են: Եւ քանի որ այդ փոխազդեցությունը Ստանդարտ մոդելում ներառված չէ, ապա դրանում չկան այն մասնիկները, որոնք ապահովում են այդ փոխազդեցությունը:

վրա, լաբորատորային էլեկտրոններից, պրոտոններից եւ նեյտրոններից Երկրի պատյանի եւ միջուկի վերաբերյալ տեղեկատվություն ստանալ: Այսօր դրանք անհասանելի են, եւ այդ անհասանելիության պատճառով մեր մոլորակի ներսում տեղի ունեցածի զանազան ֆիզիկական մոդելները հանգեցնում են երբեմն ընդհանրապես չհամընկնող արդյունքների:

Չեթազոտողները պնդում են, որ «հինգերորդ ուժի» օգտագործումը թույլ կտա ուսումնասիրել բոլոր այդ մոդելներն ու գտնել ճիշտ պատասխանները:  
Գիտնականներն իրականացրել են նաեւ մի շարք գիտափորձեր՝ իրենց կողմից պատրաստված հետազոտող սարքավորման միջոցով, որը թույլ է տալիս գտնել «հինգերորդ ուժի» հայտնվելու հետքերը: Նրանք լիովին պաշտպանեցին իրենց սարքավորումը Երկրի մագնիսական դաշտի ազդեցությունից եւ պատողների քառաչափ հավաքածուում գտնվող տարրական մասնիկներում սկսեցին որոնել ընտրված ուղղության հետքերը: Այդպիսիք նրանք չգտան, բայց, ինչպես հայտնի է, բացասական արդյունքը նույնպես արդյունք է: Տվյալ պարագայում արդյունք է համարվում այն եզրակացությունը, որ եթե հենավոր պատող-պատվող փոխազդեցությունը գոյություն ունի, ապա այն պետք է չափազանց փոքր լինի՝ ոչ մեծ, քան մասնիկների միջեւ ձգողական այն փոխազդեցության մեկ միլիոներորդ մասը, որը, ինչպես մենք գիտենք, նույնպես չափերով աչքի չի ընկնում եւ, սովորաբար, հաշվարկներում անտեսվում է՝ որպես շատ չնչին:

Գիտնականները պնդում են, որ այդ վերին սահմանը սահմանափակում է նաեւ «տորսիոնային ձգողականության» սահմանը:

## Մավրիցիա

**Վերջերս հրապարակված գիտական աշխատությունում գրված է, որ Երկրի ընդերքում, Չնդկական օվկիանոսի տակ, հնագույն մայրցամաքի մնացորդներ են գտնվում:**

մալսարանի դասախոս Տրոնդ Տորսվիկը: Այդ ցիրկոնները մոտ 600-ից 1970 միլիոն տարեկան են: Չեթազոտողները եզրակացրեցին, որ դրանք հին մայրցամաքի մնացորդներն են, որոնք հրաբխի ժայթքման արդյունքում են հայտնվել մակերեսույթին:


### Միկրոմայրցամաքի վախճանը

Տորսվիկը կարծում է, որ Մավրիցիան կարող է գտնվել Մավրիցիա կղզու եւ Չնդկական օվկիանոսի տակ՝ մոտ 10 կիլոմետր խորության վրա:  
Միկրոմայրցամաքի պատմությունը կարող է հաշվվել այն դարաշրջանից, երբ Երկրի վրա դեռ կյանք գոյություն չուներ, մինչեւ այն ժամանակաշրջանը, երբ մեր մոլորակի վրա ապրում էին դինոզավրերը: 85 միլիոն տարի առաջ, երբ Չնդկաստանը Մադագասկարից սկսեց շարժվել դեպի իր ներկայիս գտնվելու վայրը, միկրոմայրցամաքը ճեղքվեց եւ սուզվեց: Սակայն նրա մեծ մասը կարող էր պահպանվել: «Այժմ Սեյշելյան կղզիները գրանիտի կտոր են,

Չեթազոտողները կարծում են, որ ցամաքի այդ հատվածը գոյություն է ունեցել 2 միլիարդից 85 միլիոն տարի առաջ: Մայրցամաքը, որը գիտնականներն անվանել են Մավրիցիա, հետագայում բաժանվել է ավելի մանր մասերի եւ ժամանակակից մայրցամաքների ձևավորման փուլում անհետացել է ջրի տակ:

### Չնագույն ցիրկոններ

750 միլիոն տարի առաջ Երկրի ցամաքը միավորված էր մեկ հսկա մայրցամաքում, որը կոչվում էր Ռոդինիա:  
Այժմ Չնդկաստանն ու Մադագասկարը հազարավոր կիլոմետրեր են բաժանում իրարից, բայց նախկինում դրանք հարեւաններ էին:



Այսօր գիտնականները կարծում են, որ իրենց հաջողվել է գտնել դրանց արանքում սեղմված միկրոմայրցամաքի մնացորդները: Նրանք այդ եզրակացությանն են եկել՝ ուսումնասիրելով Մավրիցիա կղզու լողափի ավազը: Այդ ավազահատիկները հայտնվել են մոտ 9 միլիոն տարի առաջ տեղի ունեցած հրաբխի ժայթքումից, սակայն դրանցում հայտնաբերվել են շատ ավելի հին քարերի մնացորդներ:  
«Լողափի ավազում մենք գտանք ցիրկոններ, իսկ դրանք սովորաբար գտնվում են Երկրի ընդերքում: Դրանք շատ հին են», - ասում է նորվեգական Օսլոյի հա-

այսինքն, երկրակեղեիք բար, որը գտնվում է Չնդկական օվկիանոսի գրեթե կենտրոնում: Սակայն նախկինում այն գտնվում էր Մադագասկարից հյուսիս ընկած տարածքում: Մենք կարծում ենք, որ այդ հատվածը կարող էր շատ ավելի մեծ լինել, եւ օվկիանոսում մեծ հատվածներ դեռ շատ կան», - ասում է Տորսվիկը: «Մեզ սեյսմիկ տվյալներ են անհրաժեշտ, որոնք օգնությամբ մենք այդ կառուցվածքի ընդհանուր պատկերը կստանանք, ինչը վերջնական ապացույց կլինի: Կարելի է նաեւ մեծ տարածք շարքացան անել, բայց դա շատ քանակ կարծեմա», - բացատրեց նա:

